ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» 01. 2024թ

Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ի դեմս ղեկավար Սուրեն Թովմասյանի, և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս ռեկտոր Եղիազար Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից (այսուհետ՝ նաև Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Սույն Հուշագրի նպատակն է Կոմիտեին անհրաժեշտ հետազոտական աշխատանքների իրականացման համար Կոմիտեի համակարգ ներգրավել հետազոտական գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող երիտասարդներին, ինչպես նաև Կոմիտեի աշխատակիցներին տրամադրել ասպիրանտական կրթություն ստանալու և հետազոտական թեզ գրելու հնարավորություն՝ հայցորդության (ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի) միջոցով և այն նույն ընթացակարգով, որով անցնում են համալսարան ընդունված ասպիրանտները:

1.2. Կոմիտեն, կարևորելով բուհ-պետական մարմին կապը, ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման համար անհրաժեշտ հետազոտական աշխատանքների իրականացումը, հնարավորություն է ընձեռում ոլորտում մասնագիտանալու ցանկություն ունեցող երիտասարդներին, որպես փորձագետ, ներգրավվել Կոմիտեի աշխատանքներին:

1.3. Փորձագետ ներգրավելու պատրաստակամությունը պայմանավորված է Կոմիտեի ստորաբաժանումներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի գնահատման, անշարժ գույքի հաշվառման,չափագրման, հողաշինարարության, գեոդեզիայի և քարտեզագրության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում մասնագիտական նոր ռեսուրսների ներգրավման, հետազոտական կարողությունների բարելավման և առկա ոլորտային խնդիրների լուծման արդյունավետության բարձացման նպատակադրությամբ:

1.4. Սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող համագործակցությունը հիմնվում է արտադրական ասպիրանտական կրթության կազմակերպման համաշխարհային փորձի վրա և իրականացվում է Կողմերի բարի կամքի, փոխադարձ հարգանքի և վստահության դրսևորմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կոմիտեն, համագործակցելով Համալսարանի հետ, կարող է անհրաժեշտ հետազոտական աշխատանքներն իրականացնել ինչպես իր աշխատակիցների, այնպես էլ որպես փորձագետ ներգրավված աշխատակիցների միջոցով, որպես նախապայման դիտարկելով Համալսարանում նրանց հայցորդությունը կամ ասպիրանտ, դոկտորանտ հանդիսանալու հանգամանքը:

2.2. Հայցորդության և դոկտորանտուրայի ձևակերպումն ու ասպիրանտուրայի ընդունելությունը Համալսարանում իրականացվում է ՀՀ կառավարության 2016 թ. փետրվարի 25-ի Ն-238 որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ»-ի և Համալսարանի ներքին իրավական ակտերի համաձայն:

2.3. Անհրաժեշտ հետազոտական աշխատանքներն իրականացնելու և ասպիրանտական կրթություն ստանալու համար կողմերը ցուցաբերում են հնարավոր աջակցություն և ներգրավվածություն, լավագույն արդյունքային ցուցանիշները ունենալու նպատակով:

2.4. Կողմերը կարող են իրականացնել սույն Հուշագրի նպատակներից բխող համապատասխան այլ միջոցառումներ՝ փոխադարձ համաձայնությամբ:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում իրավական և ֆինանսական որևէ պարտավորություն:

3.2. Ասպիրանտական կրթություն ստանալու նպատակով Կոմիտեի աշխատակցի Համալսարանում հայցորդության (ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի) ձևակերպման և հայցորդներին, ասպիրանտներին կամ դոկտորանտներին, որպես փորձագետ Կոմիտեի համակարգ հնարավոր ներգրավման արդյունքում առաջացող իրավական և ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և յուրաքանչյուր կողմի ներքին իրավական ակտերով:

3.3. Սույն Հուշագրին վերաբերող խնդրահարույց հարցերը Կողմերի միջև լուծվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

4. ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Հուշագրի դրույթների ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է կատարվի Կողմերի փոխադարձ՝ գրավոր համաձայնությամբ:

4.2. Յուրաքանչյուր փոփոխություն և լրացում հանդիսանում է Հուշագրի անբաժանելի մասը:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

5.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հինգ տարի ժամկետով:

5.2. Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՄԻՏԵ	ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ Կադաստրի կոմիտե	ՃՇՀԱՀ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց, 7	Հասցե՝ ք. Երևան, Տերյան, 105
Ղեկավար՝ Ս. Ծովինարյան	Ռեկտոր՝ Ե. Վարդանյան
---	---